ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

2022-2023 ՈՒՍ.ՏԱՐԻ

Հաստատված է մանկավարժական խորհրդի
օգոստոսյան նիստում « 31 » օգոստոսի 2022թ.

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Բովանդակություն

1. Ընդհանուր կազմակերպչական հարցեր
2. Մեթոդամանկավարժական աշխատանքների կազմակերպում
3. Ներդպրոցական վերահսկողություն
4. Դաստիարակչական աշխատանքներ
5. Աշխատանք ծնողների հետ
6. Գրադարանային աշխատանքներ
7. Վարչատնտեսական աշխատանքներ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2021-2022 ուս.տարում դպրոցի մանկավարժական կոլեկտիվը շարունակել է կատարելագործել աշակերտների կրթության ու դաստիարակության գործը: Կրթության մասին օրենքը, այդ օրենքում կատարված մասնակի փոփոխությունները ենթադրում են ավելի որոշակիացնել հանրակրթության ուղղությամբ տարվող աշխատանքները:

Անցած ուս.տարին առավել բեղմնավոր և արդյունավետ եղավ մեր կոլեկտիվի համար:

12-րդ դասարանի 12 շրջանավարտներից 3-ը ընդունվել են ՀՀ տարբեր բուհեր: Մեր աշակերտները ակտիվորեն մասնակցել են 5-7-րդ դասարանների աշակերտների ներդպրոցական, 8-12-րդ դասարանների աշակերտների տարածքային, մարզային օլիմպիադաներին, գրավել մրցանակային տեղեր, արժանացել խրախուսանքների: Չունենք երկտարեցիներ և վերաքննություն ունեցողներ: Կազմակերպված բազմաբնույթ արտադասարանական և արտադպրոցական միջոցառումները մեծապես նպաստել են աշակերտների գեղագիտական, ֆիզիկական, հայրենասիրական, էկոլոգիական դաստիարակությանը:

Մեր սպորտային թիմերը ակտիվորեն մասնակցել են Ազգային ժողովի գավաթին նվիրված մարզային սպարտակիադային և մարզում գրավել մրցանակային տեղեր: Առանձին պլանով աշխատանքներ են կազմակերպվել՝ նվիրված Հայաստանում հիշարժան տոներին, տարեթվերին, ճանաչված մարդկանց:

<u>Նոր ուս.տարում մեծ ուշադրություն է դարձվելու</u>

1. Ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ
2. Ուսուցման պրոցեսը ավելի արդյունավետ, դասապրոցեսը հետաքրքրիր, ուսուցումը բոլորի համար մատչելի դարձնելու նպատակով պետք է համախմբել բոլոր մեթոդմիավորումների ջանքերը, ուսումնասիրել լավագույն ուսուցիչների փորձը, ընդօրինակել ուսանելին, առաջավորը: Դասապրոցեսում օգտագործել դպրոցի ՈՒՏՄ-ները, դիդակտիկ պարագաները, տեսադարանի նյութերը:
3. Մանկավարժական կոլեկտիվի ուսումնասիրության նյութ դարձնել «Աշակերտների դաստիարակության հիմնական հարցերը» պրոբլեմը:
4. Ուժեղացնել դասագրքերի պահպանման գործը, ժամանակին լուծել վարձավճարների հավաքման հարցը:
5. Լուրջ ուշադրություն դարձնել նոր ներդրվող առարկաների ներդրմանն ու դասավանդմանը:
6. Ստեղծել արտադասարանական (առարկայական) և սպորտային խմբակներ:
7. Շարունակել պատի թերթերի լույս ընծայումը:
8. Ուժեղացնել կապը ծնողական համայնքի հետ:
9. Միջոցներ ձեռնարկել դպրոցը ձմռանը նախապատրաստելուն:
10. Կատարելագործել ֆինանսատնտեսական գործունեությունը:
11. Լուրջ ուշադրություն դարձնել ՀՀ ԿԳ նախարարության կրթակարգի պահանջներին:
12. Ուշադրություն դարձնել ԿԳ նախարարության բարեփոխումների ծրագրին և ակտիվորեն մասնակցել այդ ծրագրի իրագործման աշխատանքներին:
13. Ուշադրություն դարձնել և ակտիվացնել Աշակերտական խորհրդի աշխատանքները, նրանց ներքաշելով դպրոցի կառավարման աշխատանքներին

ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼ

ՀԵՏԵՎՅԱԼ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

1. Հ.լեզու և գրականություն պատմություն, երգ-երաժշտություն, կերպարվեստ, հայրենագիտություն	Թադևոսյան հռիփսիմե
2. Ռուսաց լեզու, անգլերեն, Ն Զ Պ	Մարգարյան Գայանե
3. Մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, գծագրություն, աշխատանք, ֆիզկուլտուրա, աշխարհագրություն,	Բակունց Թամարա
4. Տարրական դասարաններ	Հարությունյան Գոհար

ԴԱՍՂԵԿ, ԴԱՍՎԱՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Հ/հ	Դասղեկ, դասվար	Դասարան	Հերթ	Աշխատանքային շաբաթ
1.	Ազիզյան Հասմիկ	1-ին	I հերթ	5 օրյա
2.	Բաբայան Ժաննա	2-րդ		
3.	Հարությունյան Գոհար	3-րդ		
4.	Ավետիսյան Հռիփսիմե	4-րդ		
5.	Բակունց Թամարա	5-րդ		
6.	Ավետիսյան Անահիտ	6-րդ		
7.	Համբարձումյան Ինգա	7-րդ		
8.	Խաչատրյան Բալասան	8-րդ		
9.	Հարությունյան Անահիտ	9-րդ		
10.	Մարգարյան Գայանե	10-րդ		
11.	Բակունց Թամարա	11-րդ		
12.	Թադևոսյան Հռիփսիմե	12-րդ		

ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ

Դասասենյակ	Դասարան	Աշակերտների թիվը	Դասղեկ
18	1-ին	20	Ազիզյան Հասմիկ
8	2-րդ	22	Բաբայան Ժաննա
5	3-րդ	21	Հարությունյան Գոհար
6	4-րդ	11	Անետիսյան Հռիփսիմե
4	5-րդ	12	Բակունց Թամարա
1	6-րդ	20	Ավետիսյան Անահիտ
12	7-րդ	24	Համբարձումյան Ինգա
21	8-րդ	21	Խաչատրյան Բալասան
3	9-րդ	22	Հարությունյան Անահիտ
15	10-րդ	14	Մարգարյան Գայանե
11	11-րդ	8	Բակունց Թամարա
14	12-րդ	13	Թադևոսյան Հռիփսիմե

Ժ Ա Մ Ա Տ Ա Խ Տ Ա Կ

N	Դասի սկիզբը	Դասի ավարտը	Դասամիջոց
1.	9^{00}	9^{45}	5
2.	9^{50}	10^{35}	5
3.	10^{40}	11^{25}	5
4.	11^{30}	12^{15}	5
5.	12^{20}	13^{05}	5
6.	13^{10}	13^{55}	5
7.	14^{00}	14^{45}	

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Աշխատանքի բովանդակությունը	կատարման ժամկետը	պատասխանատու անձ
Սիստեմատիկաբար աշխատանք տանել աշակերտների շրջանում շրջանում մեր հանրապետության օրենքները ուսումնասիրելու, «ՀՀ անկախության հռչակագրին» ծանոթացնելու, «Մարդու իրավունքներն ու պարտականու-թյունները» լավ իմանալու ուղղությամբ.	Տարվա ընթացքում	Դասվարներ, դասղեկներ, տնօրինություն
Քաղաքացիական պատասխանատվություն դաս-տիարակել աշակերտների մոտ, նրանց կողմից դպրոցում և դրսում կարգուկանոն չպահպանելու, անօրինականության, զանցանքների և իրավախախտումների նկատմամբ բացասական վերաբերմունք դրսևորելու ուղղությամբ.	Տարվա ընթացքում	Դասղեկներ, տնօրինություն
Կազմակերպել հանդիպումներ իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ.	Նոյեմբեր	Դասղեկներ
Բոլոր դասերին դասղեկի ժամերին զրույցներ անցկացնել կուլտուրայի նորմերի, էթիկայի, քաղաքավարության հարցերի մասին		
Աշակերտներին և աշխատողներին տարերային աղետներից, հրդեհներից ապահովելու համար. կազմել քաղպաշտպանության պլան. Կազմակերպել սեմինարներ առանձին ստորա-բաժանումների ղեկավարների համար, նրանց ծանոթացնել իրենց պարտականություններին	Տարվա ընթացքում	Դասղեկներ
2-12-րդ դասարանների աշակերտների համար տեսական և գործնական պարապմունքներ կազմակերպել համաձայն ծրագրի. նախապատ-րաստել և կազմակերպված ձևով անցկացնել քաղպաշտպանության օրը	Դեկտեմբեր	Ա.Կիրակոսյան Ե.Հարությունյան
Ստեղծել ֆիզկուլտուրայի խորհուրդ Թորոսյան Ա.. Հարությունյան Ե. Շահբազյան Ն.	Սեպտեմբեր	Ա.Կիրակոսյան
Անցկացնել ներդպրոցական սպորտային միջոցառումներ. Մասնակցել մարզային մրցումներին և սպարտակիադաներին սահմանված բոլոր ձևերով. հնարավորության դեպքում ձեռք բերել մարզական գույք և հանդերձանք, կահավորել մարզահրա-պարակն ու դահլիճը: Կազմել մարզադահլիճի իրագործման գրաֆիկ: Բոլոր սպորտային միջոցառումներն անցկացնել մարզահագուստով՝ հիմնականում դրսում. Աշակերտների համար զրույցներ կազմակերպել սպորտի ծագման և նշանակության մասին, լավագույն սպորտսմեններին խրախուսել:	Հոկտեմբեր	Ա.Կիրակոսյան Ֆիզկուլտուրայի խորհուրդ

Ձեռք բերել անհրաժեշտ գույք, սարքավորումներ և կահավորել դպրոցի արհեստանոցները, սպասարկման աշխատանքների սենյակը. Կազմակերպել մրցույթ-ստուգատես աշակերտների կարգապահության, կեցվածքի, հանրօգուտ աշխատանքի, դպրոցի շենքի ու գույքի նկատմամբ պատասխանատվության զգացում դաստիարակելու նպատակով: Բոլոր աշակերտներին ընդգրկել դպրոցի շենքի ձևավորման, շրջակայքի բարեկարգման, ծառատնկման, սպորտհրապարակի կահավորման աշխատանքներին: Ճաշակով և ժամանակակից պահանջներին համապատասխան կահավորել դպրոցը: Աշակերտների համար կազմակերպել ցուցահանդեսներ, երաժշտական ստեղծագործությունների ունկնդրման երեկոներ, հանդիպումներ արվեստի գործիչների հետ: Կազմակերպել բանավեճ 7-8-րդ դասարանցիների համար «Գեղեցիկը տղաների և աղջիկների փոխհարաբերություններում» թեմայով	Տարվա ընթացքում	Ա.Կիրակոսյան
Անցկացնել զրույցներ հետևյալ օրինակելի թեմաներով. Գեղեցիկը կյանքում և կենցաղում Հայկական մշակույթը և արվեստը Ինչպե՞ս դիտել նկարը Ինչպե՞ս լսել երաժշտությունը Ի՞նչ է նշանակում ունենալ ճաշակ Ի՞նչ է վարվեցողության կուլտուրան Ո՞վ է հայրենասեր և այլն. Դպրոցում շարունակել երգչախմբի, ասմունքի, թատերական, տիկնիկային, գոբելենի, մանրանկարչության խմբակների աշխատանքը. Աշակերտների ինքնագործունեության միջոցառումների ժամանակ օգտագործել երաժշտական դպրոցի, մանկապատանեկան կենտրոնի, մշակույթի տան խմբակներում ընդգրկված աշակերտների ուժերը: Կազմակերպել ինքնագործունեության համերգներ, մրցույթներ, ցուցահանդեսներ: Այցելել պատկերասրահներ, թատրոններ, դպրոցում կազմակերպել ճանաչված կոլեկտիվների թատերական ներկայացումների դիտում:	Տարվա ընթացքում	Դասղեկներ գրադարանավար
Աշակերտների էկոլոգիական դաստիարակությունը իրականացնելու համար անցկացնել զրույցներ հետևյալ թեմաներով՝ Շրջակա միջավայրի բնապահպանության տնտեսական պրոբլեմները Հայաստանում: Բնության պահպանությունը բոլորիս պարտքն է: Թռչունները մեր լավագույն բարեկամներն են: Սևանի պրոբլեմը:	Տարվա ընթացքում	Լ.Հարությունյան
Աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և պատմության դասերին	Տարվա ընթացքում	Լ.Հարությունյան Թ.Բակունց

տարբեր ասպեկտներով քննարկել շրջակա միջավայրի պահպանման, բարելավման, բնական հարստությունների նկատմամբ հոգատար վերաբերմունք ցուցաբերելու հարցերը: Դպրոցի շրջակայքում տնկել ծառեր, աշակերտներին ընդգրկել դրանց խնամքի և պահպանման աշխատանքերում: 1-11-րդ դասարաններում կազմակերպել ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցումը: Այդ աշխատանքներում ընդգրկել նաև ճանապարհային ոստիկանության աշխատողներին:		Գ.Վարդանյան Ե.Հարությունյան
Աշակերտների դաստիարակության գործում օգտագործել դպրոցի գրադարանը: Աշակերտների մոտ սեր սերմանել դեպի գիրքը, հարստացնել դպրոցի գրադարանը նոր գրքերով: Կապ հաստատել դասվարների, դասղեկների և պարապող ուսուցիչների հետ՝ տվյալ գրքերի կյանքը երկարացնելու համար: Կազմակերպել գրքերի քննարկումներ, հնարավորության դեպքում հրավիրել նաև գրքերի հեղինակներին: Լույս ընծայել պատի թերթեր, պատրաստել վահանակներ հիշարժան տարեթվերի վերաբերյալ: Հատուկ բյուլետենով աշակերտներին և ուսուցիչներին տեղյակ պահել նոր ստացված գրքերի մասին: Աշակերտների համար կազմակերպել զրույցներ հետևյալ թեմաներով. Ինչպե՞ս աշխատել դասագրքով, Ինչպե՞ս է ստեղծվում գիրքը, Սիրեցե'ք գիրքը, Գրքի բարեկամները: Տարվա ընթացքում մի քանի անգամ ստուգել դասագրքերի վիճակը, պահանջել, որ բոլորը կազմեն:		Գրադարանի վարիչ դասղեկներ
Ճիշտ և ժամանակին կազմակերպել դասագրքերի վարձավճարների հավաքումը և մուծել բանկ		Դասղեկներ հաշվապահ

ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԻՍՏԵՐՈՒՄ և ՏՆՕՐԵՆԻ ՄՈՏ ՀՐԱՎԻՐՎՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ

Ռազմագիտության դասավանդման վիճակը, քաղաքացիական պաշտպանության և ռազմահայրենասիրական դաստիարակու-թյան հարցերը դպրոցում:	Նոյեմբեր	Ա.Կիրակոսյան
Դպրոցում անհրաժեշտ սանիտարական պայմանների, առողջության պահպանման հարցը	Սեպտեմբեր ապրիլ	բուժքույր
Ուսումնական առարկաների դասավանդ-ման վիճակը դպրոցում, դրանց կատարելագործման ուղիները: Քաղպաշտպանություն առարկայի ուսուցումը 1-5-րդ դասարաններում:		Փոխտնօրեն
Անվտանգ երթևեկության կանոնների ուսուցում տարրական դասարաններում	Տարվա ընթացքում	դասվարներ
Հոբելյանական տարեթվերի նշման, էքսկուրսիաների և տարբեր տեսակի միջոցառումների կազմակերպման մասին:	Տարվա ընթացքում	Դասղեկներ
1-4-րդ դասարաններում դասավանդվող առարկաների դրվածքի ուսումնասիրում և քննարկում:	Հոկտեմբեր ապրիլ	Մեթոդմիավորման նախագահներ
Գրերի գյուտի 1617 ամյակին նվիրված միջոցառումների շարք	Հոկտեմբեր դեկտեմբեր	Դասղեկներ

ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԼԱՆԱՉԱՓ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՏԱՐԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ

1. Դպրոցի տնօրեն՝
2. ա/ Կազմակերպում և ղեկավարում է հաստատության գործունեությունը.

բ/ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում հաստատության տնօրենի տեղակալների, մանկավարժական և մյուս աշխատողների, խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում աշխատողներին ու սովորողներին.

գ/ Ապահովում է մանկավարժական կադրերի ճիշտ ընտրությունն ու տեղաբաշխումը, անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

դ/ Վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքերի կազմակերպման նկատմամբ.

ե/ ՀՀ օրենսդրությանը համապատասխան սահմանում է հաստատության աշխատողների պարտականությունները, ապահովում ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, սանիտարաառողջապահական ռեժիմի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

զ/ Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս ցուցումներ, որոնց կատարումը պարտադիր է հաստատության սովորողների և աշխատողների համար.

է/ Ղեկավարում և կազմակերպում է հաստատության մանկավարժական, հոգաբարձուների, ծնողական խորհուրդների, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց գործունեությունը.

ը/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, հանդիսանում վարկի կարգադրիչ.

թ/ Կազմում և հաստատում է հաստատության հաստիքային ցուցակը և ծախսերի նախահաշիվը՝ ըստ գործող նորմացույցների և բյուջեից տրվող միջոցների սահմաններում.

ժ/ Ներկայացնում է հաստատությունը պետական մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում, կնքում համապատասխան պայմանագրեր.

Իրականացնում է ՀՀ գործող օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ.

Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալների միջև կատարել աշխատանքի բաժանում ըստ դասարանների և առարկաների՝

Վարդանյան Լիանա
-Պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, ուսումնական ծրագերի կատարման, դասավանդման որակի, սովորողների բացակայությունների և գիտելիքների համար. –Վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը.
-Հրահանգավորում է հաստատության մանկավարժական անձնակազմին, դասղեկներին, հաստատությունում կազմակերպում մեթոդական աշխատանք, կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ.
- Ղեկավարում է առարկայական մեթոդմիավորումների աշխատանքը,
-Ընդհանրացնում է տարածքում լավագույն ուսուցիչների և դաստիարակների աշխատանքի դրական փորձը, ուսուցիչներին հաղորդակից դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.
-Ուսումնասիրում և օգտագործում է կրթության չափորոշիչները

2. . Դպրոցի տնտեսական գծով տնօրենի տեղակալը՝ Մ.Մնացականյանը
-Պատասխանատու է հաստատության շենքի և դրա գույքի պահպանման ուսումնական գործընթացի, նյութատեխնիկական ապահովման, հաստատության սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, հաստատության ուսումնական պարապմունքներին ժամանակային նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության, էլեկտրաանվտանգության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.
-Միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու համար.

3.Դպրոցի զինղեկը՝ Ե.Հարությունյանը
-Կազմակերպում է աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությունը,
-Զբաղվում է քաղպաշտպանության կազմակերպման հարցերով: Կազմակերպում է պարապմունքները քաղպաշտպանության առանձին ստորաբաժանումների հետ.
-Հետևում է դասղեկների կողմից աշակերտների քաղպաշտպանության ուսուցմանը, անհրաժեշտության դեպքում կազմակերպում համապատասխան օգնություն.
-Կազմակերպում է 2-րդ հերթի աշակերտների ընդունումը դպրոց:
-Հերթապահում դպրոցում

4. Առարկայական մեթոդմիավորումների նախագահները կազմակերպում են
-Տվյալ առարկայի մեթոդական աշխատանքները, ուսումնասիրում ուսուցիչների առաջավոր փորձը, ընդհանրացնում և պրոպագանդում, կազմակերպում փոխադարձ դասալսումներ, առարկայական ցերեկույթներ, օլիմպիադաներ, խմբակներ, ռադիոհաղորդումներ: Ստուգում և հաստատում են ուսուցիչների թեմատիկ պլանները, կազմակերպում օրինակելի դասեր, քննարկում դրանք, հետևում են ծրագրերի կատարմանը, կաբինետների հարստացմանը, դիդակտիկ նյութերի և ՈՒՏՄ-երի օգտագործմանը: Օգնում են ուսուցիչներին զբաղվել ինքնակրթությամբ, նախապատրաստվել ատեստավորմանը:

5. Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը

-Ուսումնասիրում է հանրապետությունում գործող մանկական և հասարակական կազմակերպությունների աշխատանքը, ծանոթացնում աշակերտներին դրանց գործունեությանը և երեխաների ցանկության դեպքում օգնում նրանց դպրոցում նման կազմակերպությունների ստեղծմանը: Այդ կազմակերպությունների նպատակը պետք է լինի դաստիարակել հայրենասեր բազմակողմանի զարգացած, առողջ և կարգապահ մարդիկ: Օգնել ուսուցիչներին և ծնողներին ավելի արդյունավետ դարձնելու երեխաների կրթության և դաստիարակության գործը:
-Օգնում է ուսուցիչներին, դասղեկներին ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպման և անցկացման գործում.
-Հետևում է քաղաքում կազմակերպվող մանկական միջոցառումներին, տեղյակ պահում դասղեկներին և անհրաժեշտության դեպքում ըստ տարիքային խմբերի կազմակերպում աշակերտների մասնակցությունն այդ միջոցառումներին, դաստիարակության գծով փոխտնօրենի հետ միասին հետևում է աշակերտների կեցվածքին, հագուստի պատշաճությանը, գրենական պիտույքների և դասագրքերի առկայությանը.
-Հետևում է աշակերտների կարգապահությանը դպրոցում, գրանցում դասերից ուշացող, անհարգելի բացակայող, դասերի ժամանակ միջանցքներում թափառող աշակերտներին, տեղյակ պահում դասղեկներին, համապատասխան փոխտնօրեններին և օգնում նրանց աշակերտների կարգապահության բարձրացման հարցում.
-Օգնում է դաստիարակության գծով փոխտնօրենին՝ կազմակերպելու աշակերտների հերթապահությունը և անմիջականորեն հսկում նրա իրականացմանը: Մասնակցում է դժվար դաստիարակվող և ծնողների հսկողությունից դուրս մնացած աշակերտների հետ տարվող աշխատանքներին.
-Ուսումնասիրում է երեխաների հակումները, նախասիրությունները և անհրաժեշտության դեպքում խորհուրդ է տալիս երեխային, նրա ծնողին՝ ընտրել համապատասխան խմբակ կամ արտադպրոցական այլ կազմակերպություն.
-նախօրոք իր մոտ պետք է ունենա քաղաքում գործող արտադպրոցական կազմակերպությունների ցուցակը և խմբակների տեսակները.
6. Դասղեկ
-Դաստիարակչական աշխատանք է տանում իրեն հանձնված դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ.
-Ապահովում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքների մանկավարժական պահանջների միասնություն.
-Անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.
-Իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, դպրոցի ղեկավարությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի վերաբերյալ տեղեկություններ.
-Կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանը և ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային շրջագայություններ, կանոնավորում օրվա ռեժիմը, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի նպատակային կազմակերպմանը.
-Հաստատության /դպրոցի/ մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.
-Արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այլ ձեռնարկումները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների կենսագործմանը.
-Միջոցներ է ձեռնարկում աշակերտների անհարգելի բացակայությունները կանխելու ուղղությամբ.

-Կազմակերպում է աշակերտներին դասագրքով ապահովելու, վարձավճարները ժամանակին մուծելու գործը:

ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ

Աշխատանքի բովանդակությունը	կատարման ժամկետը	Պատասխանատու անձ
1. Ուսուցիչների մեթոդամանկավարժական վարպետությունը բարձրացնելու համար Դպրոցի գրադարանում ստեղծել մեթոդական անկյուն՝ այն համալրելով նոր մեթոդական ուղեցույցներով, հրահանգներով, ծրագրերով, կազմակերպել դասախոսություններ, զրույցներ՝ նվիրված ուսման և դաստիարակության հարցերին.	տարվա ընթացքում	գրադարանավար
Օգնություն ուսումնական կաբինետների կահավորման, դիդակտիկ նյութերի ստեղծման, եղած ուսումնաօժանդակ գրականությունը ճիշտ օգտագործելու հարցերում.	Տարվա ընթացքում	տնօրեն
Խրախուսել մանկավարժների ստեղծա-գործական աշխատանքը, օգնել խոր-հուրդներով և համապատասխան գրակա-նությամբ, կազմակերպել համադպրոցական օրինակելի դասեր,	Տարվա ընթացքում	Փոխտնօրեն, մեթոդմիավորումների նախագահներ
Նամակագրական կապեր հաստատել Ֆրանսիայի Վիլյուրբան քաղաքի հայկական դպրոցների հետ, օգնել նրանց դպրոցական դասագրքերով, դիդակտիկ նյութերով, կազմակերպել փոխայցելություններ,	Տարվա ընթացքում	Տնօրեն
Բազմակողմանի օգնություն կազմակերպել երիտասարդ ուսուցիչների համար: Մամուլում տպագրվող ուսուցիչների առաջավոր փորձի ուսումնասիրման,	Տարվա ընթացքում	Մեթոդմիավորումների նախագահներ
Մանկավարժական նորությունների և կարծիքների քննարկման և աշխատանքի ընթացքում դրանց կիրառման համար ստեղծել մեթոդական խորհուրդ հետևյալ կազմով. Թադևոսյան Հռիփսիմե Բակունց Թամարա Մարգարյան Գայանե Հարությունյան Գոհար	Տարվա ընթացքում	Տնօրեն

Կազմակերպել ուշագրավ աշխատանքների քննարկումներ		
Կազմակերպել սկսնակ ուսուցիչների ստաժավորում. ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կրթության նախարարության հրահանգ-ներին ու փոստաթղթերին, ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստման, վերաորակավորման և ատեստավորման նախապատրաստման դասընթացներում /ըստ պահանջի/ ուսուցիչների համակարգչային և ինտերնետային գրագիտության կիրառման համար: Պարբերական ինֆորմացիա տալ հետաքրքիր հոդվածների, առաջավոր փորձի մասսայականացմանը վերաբերվող թղթակցությունների, մեթոդական նոր գրականության, դիտողական նոր պարագաների մասին, ապահովման համար կազմակերպել համակարգչային ինտերնետային դասընթացներ		Տնօրեն փոխտնօրեն
2. Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկել հետևյալ հարցերը Առաջին նիստ -2021-2022 ուս.տարվա արդյունքները և նոր ուս.տարվա խնդիրները. -Ամառային առաջադրանքների և վերա-քննությունների արդյունքների մասին.		Ա.Կիրակոսյան Լ.Վարդանյան
Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի նախագծի քննարկում և հաստատում. Դպրոցի ուսումնական պլանի քննարկում և հաստատում		Ա.Կիրակոսյան
Երկրորդ նիստ Մեթոդական զեկուցումներ Աշակերտների դաստիարակաության հիմնահարցերը. Դպրոցի ուսուցիչների համատեղ աշխա-տանքը աշակերտների առաջադիմության և կարգապահության բարձրացման գործում:		Ա.Կիրակոսյան
Երրորդ նիստ Առաջին կիսամյակի արդյունքները և երկրորդի խնդիրները. Մեթոդական զեկուցումներ. Դասղեկի դերը դպրոցում		Ա.Կիրակոսյան
Չորրորդ նիստ Մեթոդական զեկուցումներ Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը Արտադասարանական միջոցառումները դաստիարակության միջոց.		Լ.Վարդանյան
Հինգերորդ նիստ 9 և 12-րդ դասարանների աշակերտներին քննություններին թույլատրելու մասին		Ա.Կիրակոսյան Փոխտնօրեն

Քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին		
Վեցերորդ նիստ 1-8-րդ և 10-11-րդ դասարանների աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու մասին.		Ա.Կիրակոսյան Փոխտնօրեն
Յոթերորդ նիստ 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտ-ների դպրոցն ավարտելու մասին. Ամառային առաջադրանք և վերաքննություն հանձնելու մասին Նույն դասարանում թողնելու մասին		Ա.Կիրակոսյան Փոխտնօրեն

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ծ Ն Ո Ղ Ն Ե Ր Ի Հ Ե Տ

Աշխատանքի բովանդակությունը	կատարման ժամկետը	պատասխանատու անձ
Հրավիրել ծնողական դասարանական ընդհանուր ժողովներ՝ կոմիտեի դպրոցական կոնֆերանսի համար:	սեպտեմբեր	Ծնողկոմիտե
Ընտրել ծնողական և հոգաբարձուների խորհուրդներ: Օգտագործել շնորհալի ծնողների ուժերը դպրոցի շենքի ձևավորման և վերանորոգման հարցերում:	հոկտեմբեր	Տնօրեն
Այցելել վատ սովորող, անկարգապահ, դասերից անհարգելի բացակայող, ծնողների հսկողությունից դուրս մնացած աշակերտների տները, հարկ եղած դեպքում նաև ծնողների աշխատավայրը:	Տարվա ընթացքում	Դասղեկներ Ծնողկոմիտե
Խիստ անհրաժեշտության դեպքում ահազանգել ՆԳ բաժնին:	Տարվա ընթացքում	Տնօրեն
Դպրոցի առջև դրված խնդիրների լուծման գործում ընդգրկել նաև ծնողական համայնքին: Աշխատանքներ տանել դպրոցից խուսափող, դպրոցից դուրս մնացած աշակերտների հետ:	Տարվա ընթացքում	Տնօրինություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

1. Կազմել տարիֆիկացիոն ծախսերի նախահաշիվը և ներկայացնել դպրոցի խորհրդի հաստատմանը:
3. Տարվա ընթացքում ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ գույք, ուսումնա - դիտողական պարագաներ, սպորտային գույք, օժանդակ նյութեր և գործիքներ, լաբորատոր սարքավորումներ:
4. Դպրոցական գույքն ու սարքերը բաժանել համապատասխան դասարանների, կաբինետների միջև, ակտով հանձնել կաբինետի վարիչներին, ուսուցիչներին և մյուս պատասխանատու անձանց:
5. Մշտական հսկողություն սահմանել շենքի և գույքի պահպանման, ընթացիկ վերանորգման ուղղությամբ:
6. Բարձրացնել դպրոցի տեխնիկական անձնակազմի պատասխանատվությունը շենքի և շրջակայքի մաքրության հարցում:
7. Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի, սարքավորումների հաշվառում:
8. Հետևել, որ ծախսված էլեկտրաէներգիայի և կապի գումարները չգերազանցեն նախատեսված նորմերը:
9. Հետևել, որ ժամանակին հաշվարկվի աշխատողների աշխատավարձը:
10. Ժամանակին լրացնել և հանձնել ֆինանսական հաշվետվությունները:

Հաստատված է դպրոցի 2022թ. օգոստոսի 31-ի
մանկավարժական խորհրդի նիստում:

Դպրոցի տնօրեն Ա.Կիրակոսյան

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

N	I Նիստ	Կատարման ժամկետ	Պատասխանատու անձ	Ծանոթ.
1.	Ամառային առաջադրանքների ստուգման արդյունքների ամփոփում	28.08	Ա.Կիրակոսյան	
2.	Դպրոցի ուսումնական պլանի քննարկում և ստուգում			
3.	Դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի քննարկում և հաստատում		Ա.Կիրակոսյան Լ.Վարդանյան	
4.	Կազմակերպչական հարցեր			
	II Նիստ			
1.	Գրաճանաչության գործընթացի ուսումնասիրությունը դպրոցի համընդհանուր հետաքրքրություն	16.11	Ա.Կիրակոսյան Լ.Վարդանյան դասվարներ դասղեկներ	
2.	Ուսուցման ժամանակակից մեթոդներ			
3.	Արտադասարանական միջոցառումների միամսյակի արդյունքների վերլուծություն, գնահատում			
	III Նիստ			
1.	Հանրակրթական առարկաներից ներդպրոցական օլիմպիադաների արդյունքների ամփոփում	25.12	Ա.Կիրակոսյան Լ.Վարդանյան դասղեկներ	
2.	Ուսման առաջադիմության I կիսամյակի վերլուծություն			
3.	Դասղեկների հաշվետվությունները 120-200 և ավել ժամ բացակայություն ունեցող աշակերտների մասին			
	IV Նիստ			
	Ուսումնական ժամանակակից մեթոդները գործնական կիրառության		Ա.Կիրակոսյան	

	մեջ (Տպավորություններ դասալսումներից)			
	Հանրակրթական առարկաներից օլիմպիադաների մարզային փուլի արդյունքների ամփոփում	19.03	Ա.Կիրակոսյան	
	Ռուսաց լեզվի դրվածքը V-XI դաս. I-IV դաս.		Ա.Կիրակոսյան Գ.Մարգարյան	
	Մաթեմատիկայի դրվածքը V-XI դաս. I-IV դաս.		Լ.Վարդանյան Թ.Բակունց Բ.Խաչատրյան	
	V Նիստ			
	Փոխտնօրենի հաշվետվությունը 2021-2021 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ		Լ.Վարդանյան	
	Դասղեկների հաշվետվությունները 120-200 և ավել ժամ բացակայություն ունեցող աշակերտների մասին	03.05	Լ.Վարդանյան դասղեկներ	
	Հանրակրթական առարկաներից դպրոցականների օլիմպիադաների հանրապետական փուլի արդյունքների ամփոփում		Ա.Կիրակոսյան	
	VI Նիստ			
	Նախաքննական գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում		Լ.Վարդայան մ/մ նախագահներ	
	Քննական հրահանգի մասսայականացում, քննական հանձնաժողովի կազմի և կարգացուցակի հետ ծանոթացում	14.05		
	120-200 և ավել ժամ բացակայություն ունեցող աշակերտների քննությունների արդյունքների վերլուծություն	մինչև մայիսի 10-ը		
	VII Նիստ			

	Ուսման առաջադիմության տարեկան արդյունքների ամփոփում	27.05	Ա.Կիրակոսյան	
	IX, XII և IV դասարանների աշակերտների քննությունների և գիտելիքների ստուգման մասնակցելու հարցը			
	Փոխադրական դասարանների աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու, գովասանագրերվ պարգևատրելու հարցը			
	Կազմակերպչական հարցեր			
	VIII Նիստ			
	Քննական շրջանի վերլուծություն	հունիս	Լ.Վարդանյան	
	9-րդ դասարանի աշակերտներին ընդհանուր (հիմնական) կրթության վկայականներ և 12-րդ դասարանի աշակերտներին միջնակարգ կրթության ատեստատներ տալու հարցը		Ա.Կիրակոսյան	
	Հաշվետվություն 2021-2022 ուս.տարում կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ		Ա.Կիրակոսյան	
	Կազմակերպչական հարցեր			
	IX Նիստ			
	202-2024 ուս.տարվա նախնական դասաբաշխման հաստատում	Հուլիս	Ա.Կիրակոսյան Լ.Վարդանյան	
	Կազմակերպչական հարցեր			

ԿԱՐԳԱՑՈՒՑԱԿ

2022-2023 ուս.տարվա առարկայական մասնախմբերի և անդամների

Հ/հ	Մասնախումբ	Ազգանուն, անուն	Ի՞նչ առարկա է դասավանդում	Աշխատ. ստաժ
ա)	Հումանիտար Հայոց լեզու և գրականություն, պատմություն, հասարակագիտություն, հայրենագիտություն	1. Թադևոսյան Հռիփսիմե (ղեկավար) 2.Համբարձումյան Ինգա 4. Ավետիսյան Անահիտ 4. Հարությունյան Անահիտ	հ. լեզու և գրական, ՀԵՊ հ. լեզու և գրակ պատմ, հասար., պատմություն.	
բ)	Բնագիտամաթեմատիկական Մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա, ինֆորմատիկա, կենսաբանություն, Ն Զ Պ	1. Բակունց Թամարա (ղեկավար) 2. Շահբազյան Նիկոլայ 3. Վարդանյան Գայանե 4. Հարությունյան Լուսինե 5. Թորոսյան Արծավիր 6. .Հարությունյան Եղիազար	ֆիզիկա մաթեմ., ֆիզիկա քիմիա, կենսաբան. աշխարհագրություն ֆիզկուլտուրա Ն Զ Պ ինֆորմ	
գ)	Օտար լեզուների Ռուսաց լեզու Անգլերեն	1. Մարգարյան Գայանե (ղեկավար) 2. Կիրակոսյան Անժելա 3. Խոջայան Ռոզա	Անգլերեն ռ.լեզու ռ.լեզու	
դ)	Տարրական	1. Ազիզյան Հասմիկ 2. Բաբայան Ժաննա 3. Հարությունյան Գոհար ղեկավար	1-ին դասարան 2-րդ դասարան 3-րդ դասարան	

Համադպրոցական միջոցառումներ				
	Միջոցառման անվանումը	ժամկետը	Պատասխանատու	նշումներ
1,	Գիտելիքի օր	սեպտեմբերի 1	դասղեկներ	
2,	Գրական-երաժշտական ցերեկույթ	սեպտեմբերի 19	Պատմության ուսուցիչ	
3,	Ռազմամարզական խաղեր	սեպտեմբեր	ֆիզկուլտուրայի և ռազմագիտության ուսուցիչ	
4,	Ասմունքի մրցույթ՝ նվիրված Եղիշե Չարենցի 126 և Սայաթ-Նովայի 311 ամյակներին	սեպտեմբերի 24	փոխտնօրեն, գրականության ուսուցիչներ	
5,	«Ինչպե՞ս կարող ենք պահպանել մեր ազատությունը և անկախությունը»	սեպտեմբերի 26	ռազմագիտության ուսուցիչ	
6,	էքսկուրսիա «Հաղթանակ» զբոսայգու թանգարան	սեպտեմբեր	դասղեկներ	
7,	Խաչվերաց տոն, այցելություն եկեղեցի	սեպտեմբեր	ՀԵՊ ուսուցիչ	
8,	Միջոցառում նվիրված «Սասնա ծռեր» էպոսին	սեպտեմբերի վերջ հոկտեմբեր	գրականության ուսուցիչներ	
9,	Ուսուցչի օր, պաստառներ, ցերեկույթ	հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	դասղեկներ	
10,	«Ա» տառի շնորհանդես	հոկտեմբեր	փոխտնօրեն, դասվարներ	
11,	Կլոր սեղան	հոկտեմբեր	մաթեմատիկայի ուսուցիչներ	
12,	Անանիա Շիրակացու 1411 ամյակի վերաբերյալ միջոցառում	հոկտեմբեր	մաթեմատիկայի ուսուցիչներ	
13,	Ավետարանական առակների բեմադրություն	նոյեմբեր	ՀԵՊ ուսուցիչ	
14,	Մրցութային պատի թերթ	հոկտեմբեր	մաթեմատիկայի ուսուցիչներ	
15,	Золотая осень	հոկտեմբեր	ռ.լեզվի ուսուցիչներ	
16,	Стенгазета посвященная <<Дню учителя>>	հոկտեմբեր	գրադարանավար, ռ.լեզվի ուսուցիչներ	
17,	<<Песня-мост дружбы>>	հոկտեմբեր	ռ.լեզվի ուսուցիչներ	
18,	Տերյանական աշուն	հոկտեմբեր-նոյեմբեր	Գրականության ուսուցիչներ	
19,	«Աշուն» ցերեկույթ	նոյեմբեր	, դասվարներ	
20,	Աշնան մրգահանդես	նոյեմբեր	փոխտնօրեն, դասվարներ	
21,	«Մենք Հայկի սերունդներն ենք» ցերեկույթ	նոյեմբեր	փոխտնօրեն, դասվարներ	
22,	День русского языка	նոյեմբեր	ռ.լեզվի ուսուցիչներ	
23,	Մաթեմատիկայի օր	նոյեմբեր	փոխտնօրեն, դասվարներ	
24,	Երկրաշարժի օր	դեկտեմբերի 7	փոխտնօրենն	
25,	Տարեմուտի հանդես, Ամանորը ինչպես են տոնում աշխարհում,	դեկտեմբեր	գրադարանավար	

	պաստառներ			
26,	Олимпиада по русскому языку среди старшеклассников	դեկտեմբեր	,ռ.լեզվի ուսուցիչներ	
27,	Հանդիպում ազատամարտիկների հետ	հունվար	ռազմագիտության ուսուցիչ, փոխտնօրեն	
28,	Հայոց բանակի օր	հունվար	ռազմագիտության ուսուցիչ	
29,	Արևմտահայ գրականության շաբաթ	հունվար	գրականության ուսուցիչներ	
30,	Մայրենիի տոն, գիրք նվիրելու օր	փետրվարի 19	Հայոց լեզվի ուսուցիչներ	
31,	Թումանյանական օրեր դպրոցում	փետրվար	Գրականության ուսուցիչներ	
32,	Մայրության տոն, պաստառներ	մարտ	լեզուների ուսուցիչներ,	
33,	Բաքվի ջարդեր-ցերեկույթ	մարտ	գրականության ուսուցիչներ	
34,	Մաթեմատիկական ցերեկույթ	մարտ	մաթեմատիկայի ուսուցիչներ	
35,	Стенгазета ко дню 8-ое марта и утренник	մարտ	փոխտնօրեն, ռ.լեզվի ուսուցիչներ	
36,	Կատակի օր	ապրիլի 1	բարձր դասարանցիներ	
37,	Утренник на темы сказок А.С.Пушкина	ապրիլ	ռ.լեզվի ուսուցիչներ	
38,	Ինտելեկտուալ խաղեր, գիտական բանավեճ	ապրիլ	բարձր դասարանցիներ, ուսուցիչներ	
39,	Սուրբ Զատիկ	ապրիլ	դասվարներ, հայոց եկ. պատմության ուսուցիչ	
40,	Այցելություն եռաբլուր	ապրիլ	ռազմագիտ. ուսուցիչ	
41,	Այցելություն զորամաս	ապրիլ	ռազմագիտ. ուսուցիչ	
42,	Զրույց ծնողների հետ «Ծառայում եմ հայրենիքիս» համատեղ պլան զորամաս	ապրիլ	ռազմագիտ. ուսուցիչ փոխտնօրեն,	
43,	Եղեռնի օր	ապրիլի 24	փոխտնօրեն, պատմության, գրականության ուսուցիչներ	
44,	Արշավներ, էքսկուրսիաներ պատմական վայրեր	ապրիլ-մայիս	Պատմության ուսուցիչ, փոխտնօրենները	
45,	Զիվանին որպես աշուղ-բանաստեղծ	ապրիլ	փոխտնօրեն	
46,	Եղեռնի օր, էքսկուրսիա Ծիծեռնակաբերդ	ապրիլի 24	փոխտնօրեն, դասվարներ	
47,	«451թ. Վարդան Մամիկոնյան» ցերեկույթ	մայիս	փոխտնօրեն, դասվարներ	
48,	Հրաժեշտ այբբենարանին	մայիս	փոխտնօրեն, դասվարներ	
49,	Праздник Букваря	մայիս	փոխտնօրեն,	

			ռ.լեզվի ուսուցիչներ	
50,	Զավախքի գրական-երաժշտական ստեղծագործությունները	մայիս	գրականության ուսուցիչներ	
51,	Զանգեզուրի ազատագրումը և Գարեգին Նժդեհը	մայիս	փոխտնօրեն, պատմության ուսուցիչ	
52,	Ինչպես դիմակայել բնական աղետներին (զրույց)	մայիս	գրականության ուսուցիչներ	
53,	Գարնան տոն	մայիս	գրականության ուսուցիչներ	
54,	Մոնթե Մելքոնյանի դերը արցախյան պատերազմում	մայիսի 9	փոխտնօրեն,	
55,	Հաղթանակի օր	Մայիսի 9	փոխտնօրեն, պատմության, գրականության ուսուցիչներ	
56,	Տարեվերջյան էքսկուրսիաներ	Հունիս	Դասղեկներ	
57,	Հայրենասիրական ֆիլմերի դիտում	Տարվա ընթացքում	ռազմ., պատմության, գրականության ուսուցիչներ, փոխտնօրեն,	
58,	Պատմական ֆիլմեր	Տարվա ընթացքում	ռազմ., պատմության, գրականության ուսուցիչներ, փոխտնօրեն,	
59,	Ֆիլմեր անվանի մարդկանց հետքերով	Տարվա ընթացքում	ռազմ., պատմության, գրականության ուսուցիչներ, փոխտնօրեն,	
60,	Հեքիաթների աշխարհում նկ. ցուցահանդես «Իմ սիրած հեքիաթը»	տարվա ընթացքում	փոխտնօրեն, դասվարներ	
61,	էքսկուրսիա «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները»	տարվա ընթացքում	փոխտնօրեն, դասվարներ	
62.	էքսկուրսիա Տաթև	տարեվերջ	փոխտնօրեն	

Հաստատված է մանկավարժական խորհրդի կողմից